ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.5. Վրաստան: Բնակչությունը և տնտեսությունը

• • •

Թեթև արդյունաբերության խոշորագույն ձեռնարկությունները՝ բամբակ-յա,բրդյա, մետաքսյա գործվածքների, ինչպես նաև կոշկեղենի արտադրություններ կենտրոնացված են **Թբիլիսի**, **Գորի**, **Քութայիս** քաղաքներում:

Երբեմնի հզոր ու բազմաճյուղ մեքենաշինությունը վերջին տարիներին փոքր-ինչ անկում է ապրել: Ճյուղում կարևոր դեր ունեն Թբիլիսիի և Քութայիսի մետաղահատ հաստոցների, Թբիլիսիի և Բաթումի գյուղատնտեսական մեքենաների և սննդի արդյունաբերության սարքավորումների արտադրությունները:

Վրաստանի քիմիական արդյունաբերությունը ներկայացված է հանքային պարարտանյութերի, սինթետիկ մանրաթելերի, ներկանյութերի,դեղագործական, կենցաղային իրերի արտադրությամբ: Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններն են **Քութայիսը** և **Ռուսթավին**:

Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը զարգանում է սեփական ածխային ռեսուրսների (*հիշեք ածխի խոշոր հանքավայրերը*),հզոր ջրաէներգետիկ ներուժի, ինչպես նաև ներմուծվող նավթի ու բնական գազի հիման վրա:

• • •

Մերձարևադարձային կլիման(խոնավ արևմուտք և չորային արևելք), բերրի հողերը հնարավորություն են տալիս զարգացնելու բազմաճյուղ բուսաբուծություն, որը մասնագիտացել է մերձարևադարձային մշակաբույսերի աճեցմամբ՝ թեյ, ցիտրուսներ(առավելապես ՝ մանդարին): Վրաստանի համար առանձնահատուկ է այն,որ գյուղատնտեսական հանդակները այնքան էլ մեծ մակերես չեն զբաղեցնում՝տարածքի մոտ կեսը:

Բնական ինչ գործոններով է պայմանավորված.

Ցանքատարածությունների մակերեսը ինչի՞ հաշվին կարելի է մեծացնել...

• • •

Անասնապահությունը համեմատաբար թույլ է զարգացած: Արևմտյան շրջաններում առավել տարածված են՝ խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ արևելքում՝ մանր եղջերավոր անասնապահությունը՝ ոչխարաբուծությունը:

Վրաստանի համար շատ կարևոր դերակատարում ունի ***կուրորտային տնտեսությունը***, որի զարգացմանը հատկապես նպաստում են՝ Սև ծովի լողափերը, Բորժոմի, Ծղալտուբոյի հանքային ջրերի առողջարանային գոտիները, լեռնային առողջարանները: Սև ծովի ափը կարևոր հանգստավայրային գոտի է դարձել հայաստանցիների համար՝ Ուռեկի, Քոբուլեթի:

• • •

Բնակչությունը տեղաբաշխված է անհավասարաչափ, խտաբնակ է հատկապես ծովափնյա գոտին: Բնակչության ավելի քան 55%-ը ապրում է քաղաքներում: Երկրի միակ միլիոնանոց քաղաքը՝ Թբիլիսին է, որը շուրջ 1550 տարվա պատմություն ունի: Խոշոր քաղաքներից են նաև՝ Բաթումը, Քութայիսը, Ռուսթավին և Փոթին:

• • •

Վրաստանի տնտեսության դիմագիծը որոշող ճյուղերից է համարվում նաև ***միջազգային զբոսաշրջությունը:*** *Վերջին տարիներին ներքաղաքական և տնտեսական իրադրության վատացման հետևանքով տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը, զբոսաշրջությունը, առողջարանային տնտեսությունը կտրուկ անկում են ապրել:*

Արդյունաբերության մեջ առաջատարը գյուղատնտեսական հումքի վերամշակող ճյուղերն են՝ սննդի և թեթև արդյունաբերությունը, որոնց բաժին է ընկնում արդյունաբերական համախառն արտադրանքի շուրջ 70%-ը:

Սննդի արդյունաբերության կարևոր արտադրատեսակներից են ***թեյը, գինին, պտուղ-բանջարեղենային պահածոները, հանքային ջրերը,*** որոնք ունեն ***ապրանքային*** կարևոր նշանակություն և կենտրոնացված են Վրաստանի արևմտյան շրջաններում: Ինչպես կմեկնաբանեք: Գինեգործությունը մասնագիտացված ճյուղ է համարվում հատկապես Կախեթում և Ռիոն գետի հովտում: